

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՆՈՐԸՆԾԱՅԱՐԱՆԻ

ԼԵՍՆԱԲԱՐԱՐԱՆ 200 ԱՄԵԱԿԸ

(1726-1926)



ՇԱՆԱԿԱԼԻՑ գէպը մը անա, զոր խայտանքով կ'ողջունենք Մխիթարայ ծան խոնարհ շառաւիղոյն. ու գիտենք, որ նոյնքան սիրով մեզ հետ կը բերկրի Հայութիւնը, մասնակից ըլլալով մեծարանքին ու երախտագիտութեան՝ հանա, դէպ եր. Հօրս Մխիթարայ:

Մեծ Անրատացի միակ նպատակ մը, միակ ծրագիր մ'ունէր. — օգտակար ըլլալ Ազգի՛ն՝ կրօնքի վարդապետութեամբ ու գիտութեան ջանքով: Անոր գործը լոկ ժա. մանակաշրջանի մը համար չէ. ան տեա. կան ըլլալու սահմանուած է՝ ցորքան աս. տեղը իրենց տեղերն են ու չեն թօթափիր: Մխիթարայ գործը Աստուծոյ ծնունդ առնելէ վերջ՝ պիտի քալէր Անոր իսկ գծած ճանապարհէն. անդրանիկ 25 ամեակ մը հիւսող ժամանակը՝ արդէն անոր գործունէութեան խոստմանից ու խորհրդա. ւոր արշալոյսն եղած էր, հակառակ ամ. պրոպագանդա՛ն որ կը սպառնային նստեցնել. և արատաւորել անոր ամբօնութիւնը, անոր գործին պայծառութիւնը:

Ինչպէս մանուկ մը հետզհետէ կ'աճի, կը զարգանայ և հուսկ տէր կ'ըլլայ իր իմացականութեան, սոյնպէս Մխիթարայ գործն ալ կը բարգաւաճէր օր քան զօր ու կը հասնէր ժամը՝ յորում հարկ էր նոյն իր Զեռակերտին մէջ կարեորագոյն կազմակերպութեան մը հիմը դնել, տալու համար տեսականութիւն, յաւերժութիւն իր ազգօգուտ գործին:

Մխիթար ինքն իսկ էր կեանքն անոր. բայց և ինքը մահկանացու էր. ո՞վ պիտի շարունակէր ուրեմն իր գործը՝ եթէ ոչ իր


ապագայ սերունդը. բայց սա իր սկիզբէն պէտք էր խարսխուիլ հաստատուն հիմն. րու վրայ, լաւագոյն խնամքը պէտք էր վայելիլ, որպէս զի Հիմնադրին ուղիով յառաջէր և իրագործուէր անոր նպա. տակը:

Առ այս անա ի սկզբանէ ուղղուած էին Մխիթարայ մտածութիւնն ու գլխաւոր ջանքերը. և այժմ հնչած էր ժամը՝ ա. ռանձին յարկի մը մէջ ամփոփելու իր մատաղ բոյսերը, իր սրտահատոր գաւազ. ները, մասնաւոր խնամքներու տակ դաս. տիարակելու և պատրաստելու տաճարեան ապագայ կրօնասէր և հայրենասէր Մխի. թարեաններ, որոնք որդւոց որդի կանգուն պիտի պահէին իրենց անմահ Հիմնադրին հաստատած Միարանութիւնը:

Ու մինչ երկդարեան պատկառելի շրջան մ'աչքերնուս դիմաց կը նկատենք այժմ՝ մտքերնուս առջև և կը շարուի կարծես Մխիթարայ աստղակաճառ խումբը. դէմ. քեր՝ որոնք կրօնքն ու Հայրենիքը պան. ծացուցած են օգտաւէտ ծառայութիւններով ու գրական բազմազգի հրաշակերտներով. բայց այդ ամէնքը կը յիշեցնեն գողտրիկ որորան մը, ուր անած և ուռճացած են իրենք, ուր զետեղած են իրենց ընդհա. նուր գործունէութեան հաստաբխտ հի. մունքը: Սոյն վայրը, Մայրավանքիս Նոր. ընծայարանը, այդ ամենուն նուիրական, յուշարձան մ'է որդի հիմնարկութեան այս 200 ամեակին՝ աւելորդ պիտի չըլլայ պատմական ինչ ինչ ծանօթութիւններ տալ « Բազմավէպ » ընթերցողաց, նկատելով որ սոյն խաղաղաւէտ կրթարանը ծրա.

գրուած է ուղղակի Ուխտիս Հեղինակէն, հիմնուած ու կազմակերպուած է անոր հակողութեան տակ և թէ անոր որմերը կը պահեն Մխիթարայ հայրենի ձայնին արձագանգները: Բաց աստի, ինչպէս ըսինք, այդ վարժոցէն ծնունդ առած են Հայ Ազգէս մեծարուած ու փառաբանուած բոլոր Մխիթարեան վարդապետները:

Մխիթար՝ տեսնելով բնակարաններու անբաւականութիւնը՝ որոշած էր այլևս ի գործ դնել կանուխէն յղացած ծրագիրը, Նախախնամութենէն յուսալով միջոցները, 1726 Մարտին կը տեղեկագրուի, թէ նիւթերը գնուած և ամէն պատրաստութիւն տեսնուած է՝ Մայիսի ծաղիկներուն միջև կ'ամփոփուի Նորընծայարանիս:



Մայրավանք Ս. Ղազարու
(կեդրոնի շէնքը և Նորընծայարանը)

Նորընծայարանի հիմնարկութեան պատմութիւնը հոս կը ներկայացնենք ըստ հետեւալ հեղինակաւոր ու վաւերական աղբիւրներու. ա Մխիթար Աբրահոր նամակները. ք Մխիթարայ ատենադպրին՝ Հ. Մատթէոս Եւդոկիացւոյ ձեռագիր ժամանակագրութիւնը:

Եթեմ Նորընծայ կային՝ երբ դեռ կառուցուած չէր առանձին Նորընծայարան:

հիմը. անտարակոյս Մխիթարայ մասնաւոր դիտմամբ ու կարգադրութեամբ՝ Կուսամօր ամսուան պահուած էր հանդիսաւոր հիմնարկութիւնը, քանի որ Անոր հովանւոյն յանձնած էր նա ից բոլոր որդիքը. հիմակ ալ Անոր կը յանձնէր Բնակավայրիս պահպանութիւնն ու խնամքը, թէ ամսուն ո՞ր օրը կատարուած է այդ հանդէսը՝ չկրցանք դժբախտաբար այդ մասին որոշ բան մը գտնել: Այն ատենները Նորընծայից վերակացուն էր Հ. Ստեփան,

1. « Վասն շինից Նորընծայարանի ծանից, զի նիւթքն ցնեցան և պատրաստք են, և ի մերձակայ ատարս սկսա-

նի հիմնարկութիւնն, յոյժ ոգնիւ կերպիւ » (Մխիթար առ Հ. Պօղոս և առ Հ. Պետրոս, 1726 Մարտ 28):

գոր Մխիթար ամիս մը վերջ, Յունիսին, Հ. Եղիայի և Հ. Յակոբ կարենցիի հետ



Գրուռն Դասարամի
(Նորքնոյաբան)

առաքելութեան կը զրկէ, զնելով անոր տեղ վերակացու զՀ. Թովմաս¹:

1. Ժմկեր. Հ. Մատթէի:

2. «Շէնքն այժմ մերժ է յեզերիւ, զի վաղին բուր ծածնն եզերի է ոկանի տննի զնի, արտաքուստ նաև ներքուստ» (Մխ. առ Հ. Պող. և առ Հ. Պետր. 1726 Յունիս 27):

3. «8 խուղ և մէկ դասառուն մեծ է ի վերն. իսկ ի վարն լուռ ճեպիով մեծ խուղ մի 23 սոց երկայնու Քեամբ, և մի լուռ մեծ ագոթարան. ևս թեւելի. և բաց յայտցանէ մի մեծ սրահ 6 զերկ և կէս երկայնութեամբ և 4 զերկ լայնութեամբ ուր պատանիք զբանուցուն և ըրէինքն, մինչ կամ վառն անձեոց և կամ վառն զու. վոյն ոչ կարենն ելանել ի պարսկն» (Մխ. առ Հ. Պետր. 1726 օգոստ. 8):

4. «Առ ծախս սորա կերտուածոյն և Նիւթոց երկու հազար հինգ հարիւր զահեկանց վառնեցան (Ժմկեր. Հ. Մատթէի):

5. «Յետ զպտանան պատանեաց տեսաց, զի սնրաւականց էին տեղիք բնականութեան, վառն որոյ բացարտ. շեցաց շինել զնորքննայարան յայնմիկ ծայրի պարտի. զին, ընդ որ հայէր հայր օհանի իւղի առաջն և եղեալ թէւելիսն. և զի յայնմիկ թէւելիցի զայր պատուանիկ

Շէնքը արագօրէն կը սկսի յառաջանալ, այնպէս որ ամիս մը վերջ արդէն բարւ. ձրացած են պատեանն ու ծածքը. կը մնայ տալ ներքին և արտաքին ծեփը¹: Ամբողջ վեց ամիս կը տեւէ շինութիւնը և կ'աւարտի Հոկտեմբերին: Մխիթար ինքն է առաջին ճարտարապետ ու ծրագրող. ինքն է որ կը հսկէ շինութեան, որպէս զի չըլլայ թէ անխնամ ու քմածին որ և է օտար կամ անյարմար մէկ մը մտնէ գործաւորաց կողմանէ: Հիմնադիրս նկատի առած է արդէն ինչ որ հարկաւոր է նորընծայ պատանեկաց: Երկու յարկէ կը բաղկանայ ամբողջ շէնքը², որուն համար 2500 զահեկան ծախս զացած է³:

Շինութեան ընթացքին Մխիթար անտեղեակ չի թողուր իր հեռաւոր զաւակներն ալ, որոնք բնականաբար իրենց քաւրոջական գործունէութեան մէջ անձկանօք կը հետաքրքրուէին նորաշէն բունիկով: Այսպէս բաւական մանրամասն կը հաղորդէ առ Հ. Յակոբ Բուզայեան⁴: Նորընծայաւորանի շինութեան մասին ընդհանուր տեղեկութիւններ, որոնցմէ կը տեսնուի Մխիթարայ մեծ խնամքն ու եռանդը, ալ և ճաշակն ու հասկացողութիւնը, լուսաւորեալ միտքն ու հիմնադրի մը յատուկ

մի, նոյն եղև այժմ և փոթօն շինեցաւ նորընծայարաւ. նին զուռն և անաի մինչև ի պարիսպն եղև զ խուղ, և առաջի իւղիցն թէւելի, և ապա անաի թէւեցաւ շէնքն զնչ ի կողմ վնեակու, և շինեցաւ ք խուղ ևս, և մին լուռ մեծ դասառուն: Իսկ ներքին զաթն սոցին, ունի զմի թէւելի նման վերնոյն. և ք մեծ խուղ մինն ագոթարան և միւսն տաքտուն ունելով զվառարան⁵ որոց բառաւորքն են կարմիր մարմարք և ի ծմանն անդի ժողովին ի ընթեռնուլ, և բաց ի սոցանէ մի մեծ սրահ 4 զերկ և կէս երկայնութեամբ, և իւրաք 4 զերկ լայնութեամբ, ուր զբօսնուցած և ճեմիցն ի ժամանակի զբօսանայ, մինչ ի պարսկն ոչ կարիցեն ելանել⁶ սակաւ արեւու, և կամ վառն ցրտոյ և անձրեայ: Ունին ևս զաղբիւր քարաշէն եռակի ծորակաւ, յորում Յ անձիք կարեն ի միտաին լուանիլ: Եւ մինչ այսպէս ի յանդիւնէ խի ճայր յոհանի⁷ մինչև ի պարիսպն ի օրմու շինիցն փականաւ, որքան տեղի աւելացաւ ի շինիցն յայնմիկ ասոր, նոյնն վերանալ ծաղկոց լինիլ պատանեաց, ուր տնկիցն զգնալէ ծաղկունաւ, և զբօսուցուն» (Մխ. առ Հ. Յակ. Բուզայեան, 1726 Օգոստ. 4):

եղող հեռատեսութիւնը՝ Շէնքն աւարտելէն վերջ, ամբողջ տարի մը անընակ կը թռչուէր որպէս զի լաւ մը չորհայ, բայց 1727-ի Հոգեգալուստէն հտըր, Նորըն, ծայր ցերեկները նորաշէն Յարկարածին մէջ կ'անցընեն և հոն կ'ուսանին առօրեայ դասերը, սակայն գիշերները կը բնակին միշտ իրենց նախկին տեղերուն մէջ՝,

Վերջապէս հիմնական մասը կառուցուած էր այլևս, բայց Միխիթար դեռ մտքին մէջն ունէր զայն ըստ պատշաճի բարեզարդելու և կահաւորելու տեսակէտը. կ'ուզէր որ ըստ կարելոյն ամէն ինչ զիմացելուն շինուի՝ դիւրաւ տեղիք չտալու փառութեան։ Այս գաղափարով արդէն 1727-ի Պարնան սկսած էր ընկզազարդել սենեակները, դռները, դասարանի նստարանները, ստոյները, վարժապետին գահն ու զբասեղանը։ Անկէ ասդին ալ սենեակներու կահաւորման կը նուիրէ ինք. զինքը. այսպէս ամէն ինչ մինչև Նոյեմբեր աւարտելով՝ անմիջապէս հոն կը փոխադրուին Նորընծայի իրենց վերակառուին Հ. Թովմասի հետ, որ արեւելքէն դառնալով՝ կրկին ստանձնեւ էր պաշտօնը։ 1729-ին ալ տեղի կ'ունենայ նորոգութիւն մը Մատարան մէջ՝,

Նիւթական շէնքն այդպէս ապահովելէ վերջ՝ կը մնար այժմ ամենակենսականը. — լաւ յաջորդութիւն մը պատրաստել անոր

մէջ, կը սահմանէ նախ՝ անոնց կարգուկացը կանոնաւորելու համար 45 կանոններ, զորս մի առ մի կը բացատրէ ամեն



Կրթական Բեմ Մի. Արքանիօր
(Գրասարան Նորընծի)

նուն առնէ, իր բոլոր ջանքը կը թափէ այլևս Նորընծայից դաստիարակութեան, ստէպ այցելելով, ուսուցանելով, դասախօսելով զանազան նիւթեր։ Աջալուրջ

1. «Ջէնի տօնիս Հոգեգալուստեան անմիջապէս սկսած տեղաւորել զբնաւ պատանին ի խուզո նորընծայարանին, որպէս զի ի ցերեկին անց իւրաքանչիւրն ի խղի իւրում ընթեկնուցան։ ևս ի նորակերտ դասատան սկստնեցաւ դասաւորութիւն, և ամենայն ինչ կարգաւորեցաւ, թէ որքան մասնակ ընթերցման պարապել, և որքան զբաւանց և հանգստեան, բայց ի գիշերի զնացեալ ի հին խաղան նշըն» (Մի. առ միշայինս հասարակ, 1727 Յունիս 24)։

2. «Յայտնիք զարնան իբրիւ իւ. Օր երկուս տուրկեր բանեցան, և զըրունս խղից նորընծայարանին ընկզազարդեցին. նաև զզբասեղան և զաթոս և զնստարանս դասատան զընա յընկզեղինաց փայտից կազմեցին, և կարի զեղեցկազարդ եղև դասատուն մեր, որասցէ տէր, զի և ուսանողքն ի նմին առաքինութեամբ և իմաստութեամբ պնդազարդեցին. երկուստանից պատանեաց նստարան և տեղիք յարգաւորեցան, և աթոս հանգիւրձ զբաւանգանով յատկաւ վառն գոտեւորին և այժմ մնայ

մեզ զարգարել զխուզն իւրաքանչիւրից ընկզեցաւ սեւ գանով և ազօթարանաւ և ազնուօց պատկերօց, և մինչև հասցէ այս զիբ առ մեզ պատանին զտեղեցուցանեն ի խուզմ իւրեանց ի ցերեկիջն միայն նստելով. և յարժամ բոլոր ամառն անցանցէ, և մեր մմերան լինիցի, ապա սկսանին նաև ի գիշերի նշըն անգ. թէպէտ կարի չորացեալք են որմունքն՝ նաև այժմ լինիւր նշըն, բայց առաւել ապահովութեան թողու մնացանից զբոլոր ամառն ևս. քանզի աստուծով ունին գտեղի նշընլոյ վառն այժմայ» (Մի. առ Հ. Միք. 1727, Մայիս?)։

3. «Յաւուրս զիկտեմբերին՝ կատարեցաւ շինուած բեմի մատաղան նորընծայարանին, Յօրոյ վերին կողման սինըն, և շըշնակ պատկերին փայտակերտց էին, ցալակերս կատուցեալ վայելչացան» (ժմեկըր. Հ. Մ. Բ)։

4. ժմեկըր. Հ. Մ. Բ.

5. «Գերբարդը Աբբաշայրն է որ նոցա զգառն տայր և ի փոյթ բարեւոց զարգանալոյ նոցա յարուստս յայտունի՝ պարզապէս ինամարկէր։ Ստէպ զայր սար ու

հոգածութիւն մ'ունէր անոնց վրայ, որպէս զի երբեք ժամականաց չըլլան և օգտութիւն աշխատութիւններէն. շատ անգամ իրկուն-ները ու մերթ ցերեկն ալ մէջներին կը մտնէր և հարցփորձ կ'ընէր ու հարկ եղած մասերն ալ կ'ուղղէր, կը լուսարանէր, իսկ երբ կը տեսնէր թերութիւններ՝ կը խրատէր, կը յանդիմանէր և կը զգուշացնէր¹:

Այս ամէն բաներուն վրայ՝ զանց չէր ընէր սակայն սթափութիւն և հանգստեան ժամեր ևս տալու անոնց. մերթ ընդ մերթ իրենց դաստիարակին հետ կը զրկէր պոռոյտի և վանքերու այցելութեան, 1730-ին կը սկսի գիւղագնացութեան ալ տանիլ, ուր 10 կամ քիչ մ'աւելի օրեր կը մնային Միաբանութեան բարեկամներէն միոյն տան մէջ կամ վարձքով ուրիշ տեղ մը²:

*
*
*

Այսպէս ուրեմն բարոյական ու նիւթական շէնքերու հիմերն հաստատօրէն զննլէ վերջ փառք կու տար Աստուծոյ ու կը մխիթարուէր՝ տեսնելով ապագայ յոյսեր, որոնք իր սկսած գործին շարունակողները պիտի ըլլային:

Նորակերտ Նորընծայարանի շինութեան լուրն հասնելով և հեռաւոր վայրեր՝ շատեր կ'առաջարկուէին Հիմնադրիս խնամքին յանձնուելու:

Ստուգել անոր յարկին տակ Մխիթարայ նորանոր որդիք ուռնանալով երկդարեան ընթացքին մէջ՝ պատուաբեր ու կարևոր արդիւնքներ բնծայեցին Հայութեան, իրենց առաջին ծիւրը այս Զերմանոցին մէջ տուին այնքան մեծարելի բազմաթիւ Մխիթարեան դէմքեր, որոնք ծանօթ են Ազգիս:

Ժամանակիս ընթացքին մէջ, ինչպէս կ'ենթադրուի, Նորընծայարանն ալ ունեցած է նորոգութիւններ: 1883-ի վանքիս

մեծ հրդեհէն վերջ շէնքին վրայ նոր յարկ մը կ'աւելցուի: Մատուռն ալ, որ ինչպէս կ'երևի, Աղօթարան կը կոչէին, իր նախկին վայրէն փոխադրուած է՝ 1817-ին՝ միևնույն գետնայարկին վրայ ուրիշ մասի մը մէջ. անոր մարմարաշէն գեղեցիկ խորանին ընծայուած է վարդարանի Ամենասուրբ կու-



Խորան Ս. Գուսիմ
(Մատուռ Նորընծայարանի)

սին, որուն պատկերը 1866-ին նկարած է Կաւանեի իտալացի նկարիչը:

Ասկէ երկու տարի առաջ, 1924-ին, ընդհանուր նորոգութիւն մը կատարեցինք Մատուռն մէջ, և այդ առթիւ՝ երբ որմե-րու վրայի հնացած թուղթերը կը փոխէինք՝ բախտ ունեցանք անկարծելի անաւակնալի մը հանդիպելու. խորանին երկու կողմի որմերուն վրայ երկացան զոյգ մը հիանալի և առոյգ ծաղկեփունջեր իրենց թաղարներուն մէջ. կանչեցինք իսկոյն մասնագէտ նկարիչ մը, որ լաւ քննու-

¹ ասէին Նոցա. և զօրաւոր՝ հոխ՝ վարդապետութեամբ զատարարակէր զնոսա, և այնպէս բազում օգուտ լինէր Նոցա ի վարդացունն» (Ժճկզբ. Հ. Մ. Բ):

1. Ժճկզբ. Հ. Մ. Բ.

2. Անդր:

թննէ մ'անցընելէ վերջ յայտարարեց՝ թէ 1700-ի գեղարուեստական թանկագին նկարներ են անոնք, Մաղկեփունջերուն քովն ու ներքեւն աւելցուց նոյն դարու ոճով նկարներ, ամբողջութիւն մը տալու համար։ այսպէս ահա գեղարուեստն ալ պատմական զարդով մը ճոխացուց Մատուռը։

Հուսկ ըսենք. ներկայ Երկհարիւրա-



1700-ի Մաղկեփունջերէն միմ (Մատուռ Նորքէ-ի)

մնայ յորելանը իրաւամբ պերճ ու նուիրական խորհուրդ մ'ունի իր մէջ. այսօր իսկ զՄխիթար ինքն կը նշմարենք անոր սրահներուն ու դասատան մէջ, ուր Հիմ. նաղրիս յիշատակը յաւէտ վառ կը պահեն ու պիտի պահեն ուսուցչին աթոռն ու գրասեղանը. անկէ՝ իբր «ի գահոյից»՝ կարծես նա դեռ կը լսեցնէ իր ձայնը, իր յորդորն ու վարդապետութիւնը, իր գիտութիւնը, և անոնց արձագանգները կը կրկնուին սերունդէ սերունդ Մխիթարեան պատանիներու լսելիքներուն մէջ, հոգեներու ու սրտերու խորը։

Այո՛, դարեր պիտի անցնին, ու Մխիթար

թարայ ձայնը պիտի թափանցէ ընդ միշտ իր բոլոր հետագայ սերունդներու սրտերէն ներս, և պիտի բողբոջեցնէ պէսպէս արդիւնքներ՝ յօգուտ և ի լուսաւորութիւն Ազգիս։

Հ. Ղ. ՏԱՅՆՈՆ

«ՎԱՇՏՈՒՄԻՍ ԽՈՐԱՆԸ»

(«200 ամեակ Մխ. Նորքեայր-ի Հիմնադրութեան»)

Լուսնկայի ափերուն՝ երագի պէս ոսկեվերջ,
խորանը կայ պաշտումիս.
Յիշատակներս իմ կ'այրին հրեշտակներու ափին
[մէջ,
Խընկաբոյր է իմ հոգիս։

Ինձ սիրելի է խորանն ազամանդէ կրթանիտ,
Հոն կոյսերու աղօթքով՝
Խորհած, յուզուած եմ լլուրիկ, սէր ամբարած
[շիթ առ շիթ
Նուշաններու բաժակով։

Երանութեան ծոցին մէջ եզերուած էր իմ հոգիս,
Լիւաներու պէս անմեղ.
Աստուածային հրպուսով՝ արթայութիւն էր այդ
[տեղ
Բառումներով խելայեղ։

Որքան անոյշ էր խորհիլ լըճի ափին երազուն,
Նոճիին տակ լուռ նստած.
Ախլաններն ալ այդպէս իրենց կեանքի պատմու-
[թիւնն,
Երագած են և հիւսած։

Կապոյտին մէջ հըմայքոտ, ծագող արփույն պէս
[յուզուած.
Հեքեաթ մ'է կեանքն ապրումի.
Մայր բընութիւնն իսկ դայեակ, ծաղիկներու հետ
[սընած՝
Թարմ մանկութիւն մը կ'ապրի։

Անծանօթ է աշխարհէն խոր դարերով կընքուած,
Մասունքի պէս սրբազան.
Խորհրդաւոր և դիւթիլ՝ ինչպէս սիրոյ առեղ-
[ծուած
Հըրաշքներու թանգարան։

Մեղրի նըման կը կաթի հանապններու շնչին բոյր
Որմերն ի վայր սրբացած.

